374

1. Տիրոջ կամքով խոստացա,
Որ միշտ Իրեն ծառայեմ,
Հավերժ հետևից քայլեմ:
Նեղ դռնով է իմ ճամփան՝
Փուշ ու քար և նեղություն,
Որ տանում է փրկության,
Դեպի կյանքը հավիտյան:

2. Ու երբ փշերը ծակեն,
Չարի նետերը խոցեն,
Գիտեմ՝ ինչ պետք է անեմ:
Նայեմ աչքերիդ բարի,
Նայեմ ու ոչինչ չասեմ,
Նայեմ ու մխիթարվեմ,
Քանզի ամենը գիտես:

3. Պատվիրեցիր միշտ ներել,
Անգամ թշնամուն սիրել,
Նրա համար աղոթել:
Առանց Տիրոջ տկար եմ,
Առանց Տիրոջ ես չկամ,
Առանց Տիրոջ անզոր եմ,
Իմ ջանքերը իզուր են:

4. Խոստացար տուն պատրաստել
Եվ զավակներիդ տանել,
Հավերժ սիրուդ մեջ պահել:
Միմիայն Հիսուսով է,
Միմիայն Հիսուսի հետ,
Միմիայն Հիսուսի մեջ՝
Հաղթությունը փառահեղ:

5. Փառաբանենք Հիսուսին,
Ապավենին ու Վեմին,
Կենաց Հացին ու Լույսին:
Եղբայրնե՛ր, դուք գործեցե՛ք,
Տիրոջ խոսքը տարածե՛ք,
Իմ քույրե՛ր, դուք աղոթե՛ք
Եվ Տիրոջ Հոգով լցվե՛ք: